

Գ Է Ո Ր Գ Զ Ո Ւ Բ Ա Ր (1)

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ)

Գէորգ Զուբարի, որի յանկարծական մահը ա՛յնքան խոր ցաւ պատճառեց տա՛մենքիս, գրական եւ բեմական քառասունամեայ գործունէութեան յորելեանի առթիւ որ կատարուեց Ռոստովում 1923ին, ես գրել էի նրա կենսագրութեան մի ուրուագիծ, որ այստեղ արտագրում եմ՝ Ամանիսի ընթերցողների համար:

Գէորգ Զուբարը ծնուել է Նոր Նախիջեւան քաղաքում, 1864 թուականին: Մայրն էր Թադուշի, ծնեալ Շապուշիկեան, հայրը՝ Օհանջան աղա, կամ Զովհաննէս, որի իսկական ազգանունն էր Պարսեան, իսկ Զուբար նրա մականունն էր:

Զովհաննէսը, որ գործարանատէր էր եւ վաճառական, միաժամանակ իր համաքաղաքացիների շրջանում յայտնի էր իբր մի կրթուած եւ զարգացած անձնուորութիւն: Բացի այն որ նա ունէր զուտ հայերէն գրքերից բաղկացած հարուստ գրադարան, նա ստանում էր իր ժամանակի բոլոր պարբերական հանդէսները, «Հիւսիսափայլ», «Կուսնի», «Մասեաց Աղանի», «Մեղու Հայաստանի», եւ այլն: Սրանց շրջապէս Զովհաննէսը իրազեկ էր իր ազգի թէ՛ անցեալ պատմութեան եւ թէ՛ ժամանակակից ընդհանուր վիճակին: Նա մէկն

էր իր ժամանակի պատուաւոր, ազգասէր կոչումը իրաւամբ կրող հարուստ վաճառականներից:

Բնականաբար աշխարհի մի քաղաքացիի տունը լինում էր առիական քնից նոր զարթնող անհատների համար իբր մի մտաւոր կենտրոն: Ինչ խօսք որ աշխարհի մի հայ ողով տողարուած ծնողի սրտին խիստ մօտ պիտի լինէր իր զուակին նոյն ոգով դաստիարակելու գործը: Եւ ահա փաբրիկ Գէորգին՝ դեռ մանկական հասակում, այն է 1872 թուականին, հայրը՝ մօր ձեռքով՝ ուղարկեց Մոսկուա, Լազարեան ձեմարան:

Այդ թուականներին, Լազարեան ձեմարանը, իբր մի գուտ հայկական հիմնարկութիւն, ինամուում եւ պահպանուում էր Հայի կապիտալով, բայց որը, չնայելով ցարական թէժիմի հայտաեաց, ճնշող եւ հալածող ոգուն, դեռ իր մէջ վառ էր պահում հայ ոգին: Եւ այդ՝ շնորհիւ գլխաւորապէս մեր անմոռանալի բանաստեղծ Սմբատ Շահադիդեանի եւ Սաեփաննոս Նազարեանի, սրտնցից առաջինը Հայոց լեզուի դասատու էր: Ահա այդ ազդեցութեանց տակ մեծացաւ եւ սնուեց մեր մանկահասակ, յզայուն եւ ոգեւորուող սրտի տէր Գէորգը: Այդպիսով նրա մէջ կատարուեց տեղատուութիւն եւ մակընթացութիւն, ընտանեկան սիրոյն եւ զգուանքին փոխարինեցին մարութիւնը իտէալներ:

Նրա ընթերցանքն էին Զովհաննէս Զովհաննիսեան, Կ. Կուսիկեան, Լ. Սարգսեան, Եղիշէ Մատաթեան եւ ուրիշները, որոնք ամպօքայտած, Գէորգի նման, փայլեցին

(1) Այս գրութիւնը մեր խնդրանքով մեզի զրկեց ողբացեալ տաղանդաւոր գրագետ ու բազմապատասխան հանրային գործիչ Գէորգ Զուբարի մասին՝ իր վաղեմի բնրեկամը, ծանօթ Թատերագիր Ալեքսանդր Աբելեանը: ԿԸ. Խ.

իբր բանաստեղծ, գրող եւ հասարակական գործիչ: Լազարեան ձեմարանից, Գէորգը անցնում է Մոսկուայի Համալսարանի իրաւաբանական բաժինը, որը եւ աւարտում է փառաւորապէս: Ապա, Յովհաննէսը չարժանացաւ ուսումնաւորութեան, որպէս տեսութեան. նա մեռաւ այն ժամանակ երբ Գէորգը գեռ Լազարեան ձեմարանի վեցերորդ դասարանումն էր:

Վերագտնալով հայրենի քաղաք, նա սկսում է պարապուել իր մասնագիտութեամբ, այն է փաստաբանութեամբ:

Այդ մասնագիտութեան մէջ Գէորգը Չուբարը յայտնի է իբր ճարտարախօս հետաքրքիր ձեմարանի շնորհիւ նա յաճախ ունենդ իրենցիկ մէջ զարթեցնում էր վառ զգացմունք:

Իր փաստաբանական երկարամեայ գործունէութեան միջոցին, Գէորգը Չուբար շատ անգամ է պաշտպանել չուսեւորների դատը, առանց ու եւ է վարձատրութեան:

Հէնց իր հայրենիք վերագտնալու առաջին օրերից Գ. Չուբար ձեռնամուխ է եղել ազգային հասարակական բոլոր գործերին, որոնց մէջ փայլել է իբր զեկալար: Բաւական է ասել որ կաթողիկոսական ընտրութիւններին երկու անգամ ընտրուած է իբր Բեսարաբիայ թեմի պատգամաւոր:

Գէորգը Չուբարին ճանաչող ամէն մի անհատի արող հայեացքից չի կարող ստորգիլ մի հանդամանք որ նա բազմակողմանի եւ արտակարգ ընդունակութիւնների տէր է, որոնց մասին կարելի է երկար կանգ առնել, սակայն բաւականանաք առ այժմ՝ այսքանով:

Գեորգ Չուբար իբր գրող. — Գէորգը Չուբար, գեռ Համալսարանում ուսմանը ժամանակ սկսում է գրականական իր փորձերը: Նրա անդրանիկ «Փշրուած կեանք» վէպիկը, որ լոյս տեսաւ նոր Կար լրագրում, գրուեց շատ գրագէտների ուշագրութիւնը: Այն օրերից սկսած Գէորգը Չուբարը աշխատակցում է մանկական Ազգիւր ամսագրին, Տարագ շտաբի անդամին,

Հանգես գրականական ժողովածուին, Լուսայ ամսագրին, տեղական Լոյս, Գաղութ, Մի Չայն եւ ուրիշ Պրիագովսի Կրայ եւ Իւմնի Տեղեկագիթերին, Մոսկուայում ուրիշ Լոյս-Յովհաննէս Ամիրեանի-ձեռքով-հրատարակուող Վեսնիկ Արմենի ամսագրին, եւ այլն:

Ռուս գրականութեան մէջ նա յայտնի է, ըսցի իր գրուածքների թարգմանութիւններից, եւ իբր սրամիտ ֆելեթաւոր:

Նոյնպէս նրա գրչին են պատկանում Ծովի Գաղսնիք եւ Թափօրի Աղջիկը օպերէտները:

Իսկ ուսերէնից հայերէն թարգմանել է Տրիպի, Վանիւթիի Զաւակներ, Էլզա, Խոբաւուղուած զանգ եւ այլ բազմաթիւ փոքրիկ պատկերներ, օրինակ՝ Շամիրամ, Քրիստո, Ինչ եր երգում քամին, Ծովի արկին, Նրագ, Մի վարդի պատմութիւն, Յիւսաւ ոչխարներ, Մոռացուած շուն, Նա սպասում է գեռ, Թանգաւանում, Ոսկեայ շուշան, Վերջին կեցցէն, Այսն եւ Հեկտոր, Ազուար, Արիւնտ ճագարոյց, եւ այլ նման շատ պատկերներ:

Հետաքրքրական է յիշատակել որ Գէորգը Չուբարի գրուածքների վերաբերմամբ ընդհանրապէս գեղեցիկ վկայութիւններ են տուել աշխարհի ձեռնհաս եւ հեղինակաւոր քննադատներ ինչպէս Միլտոն Բերքերեան, Բոլշի Շահաղարեան, Բոլշի Մ. Արամեան եւ հայագէտ ու հայ գրականութեան քաջամեծ ռուս գրող պրոֆ. Իւրի Վեսնիկովի, պրոֆ. Մարր, հրապարակախօս Գ. Չանշեան: Արանց բոլորի կարծիքների արտայայտութեանց ամփոփումը հետեւեալն է՝ «Գէորգը Չուբարի գրուածքների մէջ կայ խոր հոգեբանութիւն, գեղեցիկ նկար, եւ հարուստ ու սահուն լեզու»:

Աւելի եւս հետաքրքրական է ինչ է ասել մեր անմահ բանաստեղծ Ռաֆայէլ Պատկանեանը, Գէորգը Չուբարի հէնց առաջին մի քանի պատկերները կարգաւորց յետոյ. «Առ մեր Տարգմանեւն է»:

Գէորգը Չուբարի գրուածքներից մի քանիսը թարգմանուած են ուսերէնի եւ եւ նոյն իսկ գերմաներէնի:

Բացի վերոյիշեալներից նա ունի շատ անտիպ գրուածքներ:

Պեղւեալութեան գրուածքներից ջակ, Գէորգ Չուբարը ունի մի շարք թատերական ինքնուրոյն աշխատութիւններ, այն է Սահլուխ, Հին անցեալից, Փառանձեմ թագունի՝ պատմական կեանքից պիէսներ, Մարօ, Արեւելի աստղի օպերէաները, Գիմ Գեօ, Գիւլնագար, Ոսկի եւ սէր, Ալդպեռ եւ կեանք, Հայր եւ որդի եւ իրական կեանքից առած նիւթով ալլ տրամաններ: Թարգմանել է հայերէնից ռուսերէն Շանթի Հին Աստուծոնք պիէսը:

Բացի այդ բոլորը, Գէորգ Չուբարը գրել է մի քանի պատկերներ էլ կինոյի համար: Այդպէս, Կործանուած Արմենիայում, Կեանքի ծամածուրբիւններ, Երկու փոքր եւ Գայթակոսիւն, որի մէջ իր գեղեցիկ խաղով հանգէս է գալիս մեր բեմական փայլուն աստղ Վահրամ Գափազեան:

Գեորգ Չուբար իր բեմական գործիք.—Դեռ աշակերտական նստարանից Գէորգ Չուբարը մեծ ձգտում ունէր գէպի բեմական գործունէութիւն: Լազարեան ճեմարանի վարչութիւնից ծածուկ, նա սարքում էր ներկայացումներ: Այդ բանում նրա ընկերն էր ոմն Ալէքսեւ, որը յետոյ դարձաւ ռուս թատրոնի զարդ Ստանիսլասկին եւ որը հիմնեց Մոսկուայի համբաւաւոր Գեղարուեստական թատրոնը: Այս հանգամանքը եղաւ Չուբարին դրդողը, որպէս զի վերագաւառելով հայրենիք, նոյն գերը ստանձնէր նա իր մայրենի քաղաքում: Եւ ահա այդ օրուանից հայկական ներկայացումները Չուբարի նախաձեռնութեամբ եւ նրա անմիջական մասնակցութեամբ ստանում են առանձին փայլ եւ առանձին զարկ: Այդ օրուանից նա գաւառում, է մի անխնայ մշակ, մի եռանդուն աշխատաւոր եւ կարելի է ասել բեմական գործի կենտրոն եւ ազդակ: Շուտով նա ընտրւում է Նոր Նախիջեանի թատերասիրաց Ընկերութեան նախագահ:

Չուբարի հնորհիւ եւ ջանքերով կա-

ռուցւում է քաղաքային գեղեցիկ եւ հոյակապ թատրոնը, որից յետոյ դարձեալ նրա հնորհիւ յաճախ կովկասից հրաւիրւում են հայ խմբեր, որոնց տրամագրութեան տակ է գրւում միշտ ձրի թատրոնը:

Տասնեակ տարիներ Գէորգ Չուբարը խաղում է հայ բեմի վեմերաններ Այսամեանի, Արեւեանի, Պետրոսեանի, Ալիսանեանի, Արմենեանի, Սիրանուշի, Չուբելի, Փառանձեմի եւ այլոց հետ: Խաղում է շատ յաճախ խիստ պատասխանատու եւ խոշոր դերեր: Փայլում է միշտ իր մատածուած խաղով, մշակուած անխնայ խաղով եւ աշխատի ազդանդով, որ շատ անգամ շատ բեմագէտներ եւ նուրբ ճաշակի տէր մարդիկ համարում են նրան իսկական գերասան:

Գէորգ Չուբարի արժանաւորութիւններից մէկն էլ այն է, որ նա ինքը սիրելով բեմը, սիրել է տալիս նրան եւ շատ ուրիշներին: Եւ այսօր եթէ Նոր Նախիջեանը կարող է պարծենալ իր մի շարք հնորհիւ սիրողներով, համարձակ կարելի է ասել, որ բանում պարտական է միայն Գէորգ Չուբարի զարմանալի անխնայ աշխատասիրութեան եւ ջանքերին:

Չուբարը սիրում է քաջալերել եւ ամէն մի սկսնակ թատերագորդի: Այդ կողմից նա իր նմանը չունի: Հոգ չէ, որ բազմիցս նրա ջանքը չէ պսակւում յաջողութեամբ, բաւական է որ նա իր պարտքն է կատարում: Տեղական թատերագիր էմ. Բախչիսարայեանը մեր կարծիքով շատ բանով է պարտական Չուբարի ջանքերին: Նա չէ խնայում ոչ մի միջոց՝ Ժողովել երկու սեռի սիրողներ, օրերով զբաղւել, սովորեցնել, մշակել, եւ երբ ամէն ինչ պատրաստ է, տալ թէ հրամցնել հաւատարմութեան: Չուբարն է, Բախչիսարայեանի անդական բարբառով գրուած պիէսների դրլխաւոր հերոսների գերերում առաջինը, որ փայլում է իր տաղանդով եւ գրաւ մէջ կարելի է ասել իր մրցակիցը չունի:

Ուղիղ տառնեւհիմն տարի որանից առաջ կատարուեց Նախիջեանում Գէորգ

Չուբարի քսանեւհնգամեայ բեմական գործունէութեան յօրելեանը: Այդ յօրելեանը շնորհաւորեցին աշխարհի բոլոր հայաբնակ վայրերից, նոյն իսկ Հնդկաստանից: Առանձին ակնածութեան ու շնորհաւորութեան արժանի էր վեհափառ Հայրապետի շնորհաւորութիւնը: Այժմ՝ Գէորգ Չուբարը բուրել է իր կեանքի յիստենեութեանը գալուստը, նա տակաւին առողջ է, երիտասարդական կենդանի աշխուժութեամբ: Նա դեռ չէ գաղարել ո՛չ հասարակական գործունէութիւնից, ո՛չ գրական եւ ո՛չ մանաւանդ բեմական գործունէութիւնից, որ այնքան սիրելի են իրան:

Այս գրութեան վրայ ես աւելացնում եմ հետեւեալ մի քանի նօթերը:

Գէորգ Չուբարը, ինչպէս ասել եմ կենսագրական ուրուագծի մէջ, յայտնի հոետոր էր, ինչպէս հայերէն նոյնպէս եւ ռուսերէն լեզուներով: Վկայ առածիս որ երբ Ռոստովում փառաւորապէս ածուեց նրա իրաւաբանական-փաստաբանական գործունէութեան քսանեւհնգամեակը, այնտեղ ներկայ էին ասկաւաթիւ հայ փաստաբանների հետ՝ բազմաթիւ ռուս եւ ալլազի փաստաբաններ:

Շեշտում եմ միանգամ եւս որ այդ ասպարիկում նրա ունեցած գործունէութեան մէջ առանձնապէս յիշատակելու արժանի է այն փաստը, որ նա շատ և շատ անգամ պաշտպան էր հանդիսանում չքաւոր դասի՝ այն է զրկուած եւ հարստահարուած բանւորների՝ դասի, եւ այդ բոլորը նա կատարում էր ձրի:

Չուբարը շատ ընտանեւէր էր, իսկ նրա կինը, Տիկին Յուստիանէն, նրա վերաբերմամբ մի խնամող մայր էր եւ ընկեր:

Վերջի ժամանակները Չուբարը, թէպէտ արդէն վաթսուեւհինգ տարին անցել էր, բայց դարձեալ սիրով մասնակցում էր սիրալների ներկայացումներին, եւ նոյն իսկ երբեմն կատարում էր ամենագոյն գերերը, ինչպէս սիրահարի դեր, ևլն.:

Ունենալով անշուք թատրոնական յիշու-

ղութիւններ, նա սիրել էր գրել եւ արդէն լոյս են տեսել, Ամերիկայի Կոչակ հանդիսում, մեր սիրելի եւ անմոռաց դերասաններից՝ հանգուցեալ Պետրոսեանի, Ֆասուլեանների եւ մեր ամամհ Ադամեանի, ալլա եւ կենդանի մնացած Տիկիններ Յասմիկի, Մայսուրեանի, Դուրեան-Արմենեանի, Պ. Պ. Աբէլեանի, Փալապեանի, Արմենեանի եւ ալլոց մասին իր յիշողութիւնները: Նրա այդ յօդուածների մէջ առանձնապէս գեր են խաղում իր ընկերական անկեղծ զգացումները, ոգեւորութիւնը, սէրը՝ արուեստի համար, եւ հմտութիւնը՝ արուեստի մէջ:

Չուբարը, զանազան ժամանակներ, բաց ի իր գրական էջերից, հայ թերթերի մէջ տպել է եւ նոր նախընտանի բարբառով յօդուածներ, ֆելետաններ, բանասիրական, երգիծաբանական յօդուածներ, պատկերներ: Նա աշխատակցում էր եւ մի քանի ռուս թերթերի:

Վերջերումս գրել է մի քանի պատկերներ որոնց մի քանիսը գեաղուած են Անանիս հանդէսի մէջ: Շատերը դեռ մնում են անտիպ, բայց իր որդին (որդեգիրը, որ մի բժիշկ-խիրուրդ է) մտադիր է կարելին անել եւ լոյս ընծայել նրանց:

Չուբարը ունի գրած եւ մի քանի պատկերներ մեր խորհրդային հասարակակարգի նոր կեանքից: Առայժմ սրանցից լոյս է տեսած միայն մէկը՝ Թիֆլիսում հրատարակուող Պոլեսաւ հայ ամենօրեայ թերթի գրական-շաբաթական յաւելումի մէջ:

Չուբարի թաղման ներկայ էր շատ մեծ հասարակութիւն, բաղկացած մասամբ իր ալլազի պաշտօնակիցներից, եւ ամենամեծ մասամբ՝ նոր նախընտանի հայ ժողովուրդից: Միայն ժողովուրդի սիրելիին, միայն Չուբարի մահը կարող էր գրաւել ալլաքան մեծ բազմութիւն: Կերկայ էր առաջնորդը, գիտնական պատմադիր Գարեգին Յովսէփեան արքեպիսկոպոսը: Ուղարկուած էին շատ սրտակներ, շատ հեռագիրներ:

Վերջերս՝ Հայաստանից վերադարձից յետոյ այնքան գովաբանեցի, որ հանգուց-

եալը պատրաստուում էր գնալ մեր նոր
Հայաստանը, տեսնել նրա վերաշինուիլը,
նրա գեղեցկանալը, աղանատես լինել նրա
նոր եռացող, աշխուժով լի կեանքը: Բայց
մահը վրայ հասավ եւ խափանեց: Կիտաւ
Ձնաց եւ նրա ինքնակենսագրութիւնը, որը
իմ գրգմամբ հա սկսել էր գրել:

Թող հողը թեթեւ լինի մեր անմոռաց
բարեկամին:

Ա.Լ.ԲՍԱՆԴՐ ԱՅԵԼԵԱՆ

Նոր Նախիջևան

ԱՆՁՐԵՒՈՏ ԵՐԵԿՈՅ

Բարակ անձրեւը կ'իյնայ մինչ
փողոցին մէջ տըխուր եւ մոռած,
ես կը խորհիմ երկընքին ջինջ
եւ օրերուն գարնանամուտ:

ես կը յիշեմ պահերն անցած
լըքումներու եւ գրկանքի,
ես կը յիշեմ պահերն անդարձ
երգի, սիրոյ, գուրգուրանքի...:

երգ չը մընաց շրթներուս վրայ,
որ քեզ համար երգած չըլլամ.
վերք չը մընաց այլեւս ահա՝
որուն բովէն անցած չըլլամ:

երազներու սեմին լըքուած՝
ո՞ր աստուածին արդ հառաչել.
բայց անըստոյգ եւ անաստուած՝
ինչպէ՛ս մահուան ընդառաջել:

Փարիզ

Ա. ՅԵՄԱ